ՆՈՐ-ԴԱՐ

№ 204 ՔՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ Հինգշաբթի, 13 Նոյեմբերի, 1903 Հինգշաբթի, 13 Նոյեմբերի, ՔՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 204

Տարեկան 10 րուբ. վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը 3 ր. 50 կ. ամիսը՝ (Թիֆլիսում) 1ր., հատով 5 կ.։ Բաժանորդ են գրւում միմիայն խմբագրատանը՝ Դաւիդով. փողոց № 5.

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, Редакція «Норъ Даръ» կամ Tiflis Redaction «Nor-Dar»

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի ամէն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունւում են ամեն լեզուներով։ Յայտարարութիւնների բառին 2 կ. բեկլամների համար կրկնապատիկ։

1904 թ.

ՆՈՐ-ԴԱՐ

ՔՍԱՆՈՒՄԵԿՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Քաղաքական-գրական ամենօրեայ թերթը 1904-ին կը հրատարակուի *Թիֆլիսում* նոյն ծրագրով և ուղղութեամբ *ամեն օր*, բացի *տօներին հետևող օրերից*։

«Նոր-Դար»ի տարեկան գինն է 10 րուբլի, վեց ամսուանը 6 րուբլի, երեք ամսուանը 3 ր. 50 կ., Թիֆլիսից դուրս ամիսը 1 ր. 50., հատով դուրսը, 7 կ., Թիֆլիսում 5 կ.։

Բաժանորդ են գրւում միմիայն խմբագրատանը։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ բաժանորդները վճարում են տարեկան 40 ֆրանկ։

Յայտարարութիւնները ընդունւում են և օտար լեզուներով բառը 2 կ., առաջին երեսում 4 կոպէկ։

Խմբագրատունը գտնւում է Դաւիդով փողոց, տ, № 5.

Պոստով «Նոր-Դար»-ի հասցէն Тифлисъ въ редакцію «НОРЪ-ДАРЪ» կամ Tiflis (Caucase) Redaction du journal «Nor-Dar»

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

—

Առաջնորդող.—Պէտք է հնազանդուիլ ժամանակի պահանջներին։

Քրոնիկոն.—Լուրեր։

Շները, կատուները և մարդիկ։

Իմ պատասխանը. (Համակ խմբագրութեան)։

Մամուլի շուրջը։

Աշխարհիս վեցհարիւր մասը։

Քաղաքական.—Արշաւախումբ դէպի Թիբէթ. Ճապոնական ֆինանսները. Անգլիական առաջարկները.—Միացեալ-Նահանգները և Պանամա։

«Նոր-Դար»-ի հեռագրները։

Բասիրական—ձաշի վրայ։

Յայտարարութիւնները։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ճաշի վրայ

—

Բագուի «Ա. Բ. Գ. և Ընկ.» նաւթային գործերի կառավարչի օգնական Յակովբ Մելիք-Չահունեանը, որին գործարանի բոլոր բանուորներն էլ անխըտիր նապուբ-բէկ էին անուանում, մի յուլիսեան օր, կէս օրից յետոյ, ուղիղ ժամը չորսին, Ջարդուած, վիսորուած և քրանքի մէջ թաթախուած տուն եկաւ։ Նա իսկոյն մաաւ ննջարանը, փոխեց շապիկը, լուացուեց, սանրուից և ծխախոտը բերանին մտաւ սեղանատուն, ուր հաւաքուած էին նրա ընտանիքի անդամները։

Նրա 28 ամեայ, երկայն հասակով, թուխ դէմքով և սևորակ աչքերով կին Հեղինէն, որ իւր գեղեցկութեան չնորհիւ կարողացել էր գրաւել գործարանի աւագ կառավարիչ պ. Մարուքեանի ոչ միայն ուշադրութիւնն ու հաճութիւնը և նրանից ողջոյններ ու բնծաներ ընդունել, այլ և նրան պատահելիս կամ հետ խօսակցելիս «дуточка» բառով մեծարուել,—նստած պատուհանի առաջ, գլուխը դրած ափի մէջ աչքերը յառած բաց գրքի վրայ, իրը թէ զբաղուած էր ընթերցանութեամբ։

Նրա երկու որդիքը—8 տարեկան Սուրէնն ու 6 տարեկան Արփիկը նրա-տած յատակի վրայ, առաջինը մկրատը ձեռքին, մի ինչոր հին պատկերազարդ շաբաթաթերթից պատկերներ էր դուրս կտրում, իսկ երկրորդն անիոյթ կերպով ճանճեր էր որսում և ձգում յատակի վրայ դրուած ջրի բաժակի մէջ, ուր արդէն լողում էին ջրահեղձ դառապարտուած ճանճերը։

Ամուսնու մանելուն պէս, Հեղինէն նստած տեղը մի անհանգիստ շարժում գործեց, բարձրացրեց գլուխը և հեռուից մի թթխտած հայեացք ձգելով ամուսնու վրայ, դերասանուհուն յատուկ առոգանութեամբ բացականչեց.

—Ասա, խնդրեմ, երբ պիտի վերջ տաս քո այդ անճոռնի սովորութիւններին։

Մելիք-Չահունեանն ամենևին նշանակութիւն չտուեց կնոջ խօսքերին։ Նա անցաւ կնոջ մօտով, անցնելիս աչքը ձգեց բաց գրքի վրայ, մօտեցաւ բաց պատուհաններից մինին և սկսեց դուրս նայել։

—Հա էլ պատասխանում, հա,—սրտնեղութեամբ արտասանեց Հեղինէն և, գլուխը կախելով, սկսեց անիպատակ կերպով թերթել գրքի երեսները։

—Էդ ինչ ես կարդում,—չատ յամաք կերպով հարցրեց Մելիք-Չահունեանը նստելով պատուհանի վրայ։

—Քեզ ինչ,—կոշտ կերպով պատասխանեց Հեղինէն, առանց ամուսնու երեսին նայելու։

—Ոչինչ, միայն ուզեցի իմանալ... Երևի էլի «կանանց խնդրի» մասին կը լինի.—հիգնօրէն նկատեց Մելիք-Չահունեանը չինծու ժպիտն երեսին։

—Սակայն անբաղաքավարի ու վայրենի տղամարդկանց մասին է, որոնք կոպտութիւնը արհեստ են չինել... այ ինչպէս դու...

—Հմ... բաս հետաքրքիր դիրք է եղել,—նորից հեգնից ամուսինը և ըսկսեց պատուհանից կախած ոտները խաղացնել։

Հեղինէն ոչինչ չպատասխանեց։

— Ես էլ եմ ասում թէ ինչ կայ... Ա՜յ, այժմ հասկանում եմ,— աւելացրեց Մելիք Չահունեանը ծխախոտը բերանին և ձեռքերը ծնկների տակ դրած, սկսեց ուղղակի կնոջ նայել։

— Ի՞նչ ես հասկանում... հ'ը,—

Թիֆլիս, 12-ն Նոյեմբերի 1903 թ.

ՊԱՏՃԱՌ Է ՀՆԱԶԱՆԴՈՒԹԻՒՆ ԹԱՄԱՆՈՒՑԻՉ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ

—

Նահապետական կեանքը իւր լաւ ու վատ կողմերով, իւր առաւելութիւններով ու թերութիւններով վաղուց արդէն վերացել է կովկասեան կեդրոնական քաղաքներից, որոնց շարքում Թիֆլիսը կարելոր տեղ ունի զբաւած։ Դա քաղաքակրթութեան չաւղի մէջ մտած լինելուց յետոյ, չէր կարող ազատ լինել այդ հուժկու գործօնի անմիջական հետևանքներից։

Աբդիւնաբերութեան զարգացման, առևտրի ընդարձակման, արտաքին յարաբերութիւնների բարդուելու հետ միատեղ ահագին փոփոխութիւնների է ենթարկուել նրա ընկերական, տնտեսական կեանքը, որը ստիպում, հարկադրում է մարդկանց մոռանալ անցեալի անդորրութիւնն ու սակաւապետութիւնը, յարմարուել ստեղծուած նոր պայմանների հետ և օր առաջ ձեռք առնել այն միջոցները, որոնց ներկայութիւնը միայն կարող է նրանց ոտքի տակ գնալուց, ճմլուելուց ազատ կացուցանել։ Չլսել ժամանակակից կեանքի այդ առողջելի ձայնին, ականջ խլել նրա պահանջկոտ հրամաններին, անտարբեր մնալ միջավայրի մարդկանց առաջ դրած անպատնալի *ուլտիմատումին*, չհասկանալ, վերջապէս, ժամանակի ոգին,—կը նշանակի ծովի մէջ գտնուել և շարժումները դադարեցնել, հրդեհուած տան մէջ լինել ու կրթ չվնասուել։

Որքան էլ ասիականութիւնը խոր թափանցած լինի մեր կազմի մէջ, որքան էլ մեծ չափերի հասնելիս լինի մեր անտարբերութիւնը դէպի կեանքի հրապարակ հանած պահանջները, այնուամենայնիւ, ժամանակը իւրն անում է, թէև ուշ և դժուարութեամբ, բայց և այնպէս իւրը ստանում է։ Ապրել իւր ընկերական կեանքով բաւական բարդ մի քաղաքում, որպիսին Թիֆլիսն է, և չենթարկուել այդ կեանքի պատգամներին և կամ թուլանալ նրանց կատարելու մէջ,—անկարելի է։ Եւ այդ ժողովրդի իւր կեանքի պայմանները բարւոքելու վերաբերութեամբ ցոյց տուած շարժումն ու գործունէութիւնը դրա ամենալաւ ապացոյցն է։ Համայնական գործատնութեան ոգին թէև նոր, սահմանափակ չափերով, բայց և այնպէս մտած է մեր ժողովրդի մէջ։ Գոյութեան կռիւը նրան հարկադրել է ձեռք առնել այն միջոցները, որոնցով միայն եղրաշխատութեամբ է մեր ընկերական կեանքի ներկայ պրուաձքի մէջ անհատի գոյութիւնն ու բարօրութիւնը։

Փոխադարձ օգնութեան և համակցական գործունէութեան ոգու մեր ժողովրդի մէջ արդէն մուտ գտած լինելու ապացոյցներից մինն ևս պէտք է իրաւամբ համարել «Թիֆլիսի գործակատարների փոխադարձ օգնութեան ընկերութիւնը», որ ահա մօտ երկու տարի է գործում է յօգուտ այդ դասակարգի շահերի։

Այդքան կարճ ժամանակի մէջ խոշոր արդիւնքներ ապասել այդպիսի մի նորածիլ ընկերական հաստատութիւնից, անշուշտ, չի կարելի, սակայն, գժուար է նաև արդարացնել այն դատապարտելի սառնասրտութիւնը, որը, չգիտենք, դիտակցաբար թէ անգիտակցաբար, ցոյց է տալիս մեր գործակատար սառնարիւթիւ դասը դէպի իւր անհատական շահերին պաշտպանելու, իւր կեանքը բարելաւելու, նրան նիւթապէս ու բարոյապէս բարձրացնելու կոչումն ունեցող հաստատութիւնը։ Դատապարտելի ենք անուանում մեր գործակատար դասի ցոյց տուած սառնասրտութիւնը, որովհետև այդպիսի իւր նպատակներով անփոխարինելի մի հաստատութեան մինչև այսօրվընտանեկան ները անգամակցելու, մասնակցում են ընդամենը ոչ աւելի քան 200 հոգի, մինչդեռ հայ գործակատարների ընդհանուր թիւը դրա տասնապատիկը, քառասնապատիկն է կազմում։

Անտարբեր լինել դէպի օտարի շահը, սառնասիրտ գտնուել դէպի դուռ այս կամ այն գործունէութիւնը.—դրանք բոլորը, դուրէ, որոշ չափով արդարանան, սակայն, անուշադիր գտնուել իւր անհատական շահերի վերաբերութեամբ, չտեսնել այն ահագին առաւելութիւնները, որոնք ունդուած են նրա ներկան ու ապագան բարւոքելուն. վերջապէս անկարող լինել ըմբռնելու այն հովանաւորութեան առաջ բերած բարիքները, որոնք փոխադարձ օգնութեան հիմունքների վրայ դրուած այդպիսի մի ձեռնարկութիւն կարող է տալ և արդէն տալիս է ընկերական միևնոյն պայմանների մէջ ապրող օտար հասարակապետութիւնների մէջ, կրկնում ենք, չտեսնել, չհասկանալ այդ ամենը,—նշանակում է

— Ինա մայրիկիդ հարցրու, եթէ ճաշը պատրաստ է, գնանք սեղան նստենք,—յանձարեց Չահունեանն ու ճանապարհեց Սուրէնին։

Նա վառեց երկրորդ ծխախոտը և նստելով իւր գրասեղանի առաջ առաւ, սկսեց մատիտով ծխել։

Պէտք ասած, որ Հեղինէն վերջին ժամանակներն ուղղակի անտանելի էր դարձել։

Տարիներ առաջ, երբ Մելիք-Չահունեանը, յետ ընկած պատահական քաղաքներից մինի տարրական դպրոցի ուսուցիչ էր և ստանում էր ընդամենը չորս հարիւր րուբլի ռոճիկ, սիրահարուելով իւր տանտիրոջ աղջկայ վրայ և մեծ գժուարութեամբ կարողացաւ պսակուել նրա հետ։ Հեղինէի ծնողները չէին համաձայնում իրենց աղջիկը «քաղցած» վարժապետի տալու, բայց Հեղինէն, ինչպէս ասում են, «մի ասր մաշեկը դրած» անպատճառ Չահունեանին էր ուզում, նա մինչև անգամ սպառնաց ծնողներին, որ կամ վարժապետին է առնելու և կամ ոչ ոքի։ Ծնողները ստիպուած համաձայնեցան Մելիք Չահունեանի ու Հեղինէն պսակուեցան։

Մինչև Բագու տեղափոխուելը, որ տեղի ունեցաւ այս անցքից ուղիղ երկու տարի առաջ, նրանք ապրում էին սիրով։ Բայց Բագուում այդ սէրը փոխուեցաւ սառնութեան։ Հեղինէն դարձել էր չար, քրթմնջող, կռուարար, իսկ Մելիք-Չահունեանն ընդհակառակն համբերող, սառնասիրտ և մինչև անգամ սկզբներում կարծես նաև անտարբեր։ Հեղինէն, որի վրայ տղմել էր Բագուի ապականող մթնոլորտը, որին չդացրէլէր Բագուի կեանքը, միանգամայն թօղել էր գաւառացի կնոջն յատուկ անտեսութիւնը և նոյն իսկ համեստաթիւնը։ Նա գարձել էր նորաձիւնների և մոլի երկրպագու, շռայլող և պահանջատէր կնոջ։ Նա վատահ իւր գեղեցկութեանվրայ, սկսել էր կոկետութիւն անել միքան որ մահացու խոցումէր Մելիք-Չահանեանի սիրտը, բայց խոհեմը, կարծես մի ինչոր անբեկորելի այժի առաջ ճնշուելով, չէր կարողանում արտայայտել իւր վէրտը։ Մելիք-Չահունեանը ստանում էր 2400 րուբլի ռոճիկ, բայց ապրում էր առաջուանից վատ։ Նա տեսնում էր, որ Հեղինէն մոռանալով ամեն բան-ևւ տուն, ևւ երեխայ, ամբողջ օրը քարշ էր գալիս մոդային խանութներն ու վատնում էր քրտինքով վաստակած կոպէկները։ Նա նկատել էր, որ իւր կինն աւելի էր վատնում, քան այդ ներում էր իւր նիւթական միջոցը։ Ո՞րտեղից էր ձեռք բերում աւելորդ գումարները...

Նա գիտէր և այն որ իրենց գործարանի կառավարիչ Մարուքեանը չատ յաճախ է այցելում իւր տուն—մի հանգամանք, որ թէ գործարանում և թէ գործարանից դուրս կասկածների և ահագին խօսք ու զրույցի առիթ էր գարձել։ այդ հանգամանքը նա չիմանալու էր դնում և երբէք կնոջը չէր ակնարկում. նա սպասում էր, որ գործը ինքնիրեն բացուի։

— Մայրիկն ասում է ճաշը պատրաստ է, ներս վազելով ղեկույց Սուրէնն ու գուրսթռաւ։

Մելիք-Չահունեանը ձեռքի ծխախոտը մի քանի անգամ իրար վրայ չատ-չատ ծխելուց յետոյ, հանգրցեց մոխրամանի մէջ, վերկացաւ տեղից և գլուխը կախ՝ մտաւ սեղանատուն։

Երեխաքն արդէն բազմել էին իրենց տեղը։

Ռուս պաղպինը, կմախք գարձած պառաւ Նաստասեան ճերմակ գոգնոցը կապած, հազալով և ինչ որ քթի

լինել իսկ միջին ծայր սպառ և միայն միջին ծայր ունենալ։ Մենք ասում ենք, որ մեր հայրենակիցները, որոնք ապրում են Ամերիկայում, ունեն ավելի շատ դրամ, քան Հայաստանում, որովհետև այնտեղ ամեն մարդ կարող է ստանալ գործ և վաստակել։ Ամերիկայում

ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈՒՄՈՐԸ

Ա. Գրող էս ինքնիրն էլ էրեխա չի, որ ասես՝ ինչ ուզում ես՝ էն էլ հավատա։ Ինքն էլ գիտի, որ ինչ ասում ա, ինչ գրում ա, ինչ անում ա, ամեն ինչ հումոր

Դիչերը Նորին Մեծութեանն անհանգստացնում էին բաւական սաստիկ ցաւեր։ Նկատելի է, որ Թմբկաթաղանթը դուրս է մղուել. յետին-վերին և յետին-ներքին մասում կարմրութիւն կայ։ Թմբկաթաղանթը մի քիչ մեծացել է»։

Կ. ՊՈԼԻՍ.—Զնայելով սուլթանի այն յայտարարման, թէ մինիստրների խորհրդին է թողել ռեֆորմների խնդրի քննութիւնն ու այդ մասին որոշում կայացնելը, այդ գործի ելքն ամբողջապէս կախուած է սուլթանի կամքից, որը հրամայում է յետաձգել վերջնական վճիռը։

ՍՈՖԻԱ*). Սնցեալները 14 փախուստական, որոնք համաձայնել էին վերադառնալ Մակեդոնիա, հանդարտուել են Սոֆիայի օսմանեան կոմիսարից ստացած անցաթղթերով և յանձնարարականներով. սակայն Թլբուխան ահմանի վրայ գտնուած Զիբլուցա կայարանը հասած ժամանակ նրանց արգելուել է մտնել Թլբուխան հողը։

ՊՈՐՏ-ԱՐԹՈՒՐ,—Նաւամատոյցը սկսեց իւր գործողութիւնները. առնելով նաւային և նաւահանգստային տուրքեր։

„Новый Край“ Թերթի մի յօդուածը Ֆորմոզայի մասին տեղեկացնում է Թուերի հիման վրայ, որ Ռուսիոյ և Ճապոնիայի բարեկամութիւնը կարող է արդիւնաբերական օգուտներ տալ միայն Ճապոնիային։ Ռուսիայից Ճապոնիա արտահանուող միակ ապրանքը չաքարն է, բայց այդ արտահանութիւնն էլ պէտք է հետզհետէ կրճատուի Ֆորմոզայի արդիւնաբերութիւնն աւելանալու հետ։

ՊԵԿԻՆ.—Փոխարքայ Նուան-Շիքայը զեկոյց գահին, որ ինքը կարող է սկսել պատերազմական գործողութիւնները Մանջուրիայի դէմ։ Գեներալ Մա պատրաստէ մտնել Շանհայգուան 18,000 զինուորով։

ՎԵՆՆԱ.—Ցունայ Թագաւորի պատուին այսօր պալատական ճաշ կայացաւ, որից յետոյ Թարաւորը մեկնեց Ա-Թէնք։

ԲԵՐԼԻՆ.—Ռայխստագը գումարուելու է նոյեմբերի 20 ին։

ՍՄՄԱԼԻԼԱՆԴ.—Գեներալ Մաննէգի զօրքը նորից գրաւեց Դալադին. նա այնտեղ թողնելու է տեղապահ զօրք և վերադառնալու է Բոգոթէյ։ Հեն ապատում, որ ընդհանուր յառաջադիմացումը զեկտեմբերից վաղ լինի։

ԲՈՒԷՆՈՍ-ԱՅՐԵՍ.—Վճռուած է, որ թէև Նորդենշիլդը և նրա ուղեկիցները գտնուած են ողջ, Շարկոն կշարունակէ իւր ձեռնարկած հարաւային արշաւանքը, որը կգաղտուի անկախ կերպով գիտական հետազօտութիւններով։

Նոյեմբերի 12-ից

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. — Ծովի կողմից սոսկալի քամի է փչում ձիւնաբեր փոթորկի հետ։ Առաւօտեան ժամը 9-ի ժամանակները Նեան ու ջրանցքները մի քանի տեղ դուրս եկան ափերից։ Ջուրը կոթել է մի քանի հրապարակ ու փողոց եկեքտրական լուսաւորութիւնը հանգած է։ Մարդկանց ազատում են նաւակներով։

ԲԻՋԵՐՏԱ. — Տեղս հասաւ ռուսա-«Аврора» կրէյսերը դրա հետից գալու են նաև միւս նաւերը։ Ռուսական նաւատորմիղը այստեղ պէտք է մնայ մինչև յունուարի վերջը։

Կ. ՊՈԼԻՍ. — Սոսկալի հրդեհը ոչնչացրեց մեծ մասը Էսկի-Ջեհեր քաղաքի, որ գտնուում է Փոքր-Ասիայում, անատոլիական երկաթուղու միաւորիչ կէտում, Կ. Պոլսից 200 վերստ հեռաւորութեան վրայ։

*) Բուլղարական կառավարչական շրջաններից։

Խմբագիր հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱՆ

Վեառբուրգ 11 Նոյեմբերի

Վէքսէլի կուրսը երեք ամսով.

Լոնդոնի վրայ	հատ.	93,75
Բերլինի	» 100 մարկի	» —
Պարիզի	» 100 ֆրանկի	» —

Վէքսէլի կուրսը չէքերով

Լոնդոնի վրայ.	94,70
Բերլինի »	46,30
Պարիզի »	37,62½
Բորսային դիսկոնտը	5—6½%
4% պետական ռենտը. . . .	99½ տա
4% պետական փոխառութ. . .	—
4½% ներքին փոխ. 1893 թ. . .	—
4% գրաւաթղ. պետ. ագն. կալ. բանկի	95⅛
5% ներք. խազ. փոխ. 1864 թ.	459 տա.
5% ներք. խազ. փոխ. 1866 թ.	348 տա
5% խազ. գր. պետ. ագն. կալ.բանկի	294¼ տա
5% օբլ» Թ.-ֆ. քազ. վարկ. ընկ.	—
1/4½% » » » »	
5% » Թիֆլ. կալ. բանկի	—
6½% » » » » »	—
5% Քուրսկի կալ..	
6% » » » » »	
6% » Բագուի » »	
Ակցիաներ Բագուի նաֆթ. ընկ.	440
» Կասպիան »	5125
» Մանթաշեան և ընկ.	236 տա
Փայեր Նորել »	10800 տա
Ակցիաներ » » »	485

ԲԱԺԱՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՐՏԻՍՏԻԿ. ԸՆԿ. ԹԱՏՐՈՆ

Օրօնեմենտ 7.

Հինգշաբթի, Նոյեմբերի 13-ին, Հայոց դրամատիրական ընկերութեան խումբը մասնակցութեամբ Տ. Սիրանոյշի կը ներկայացնէ

Բագեւներ եւ ագռաւներ

Դրամա 5 արար., հեղ. Սումբատովի և Նեմիրովիչ-Դանչենկոյի, թարգ. Ն. Ամիրեանի. մասնակցում է ամբողջ խումբը։

Սկիզբը ժամը ճիշտ 8-ին է։

Երկուշաբթի, Նոյեմբերի 17-ին,

Տ. Տ. ՀՄՇԿԵԱՆԻ և ԱԻՏՏԵԱՆԻ

բենեֆիսին

կըներկայացուի առաջին անգամ Զուդերմանի

«Թիֆլիսի Կռիւը»

Ռեժիսոր Ս. Ջաքար։

(325) 2—2

ԹԻՖԼԻՍԻ ԱՐՓՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

Ռուսական օպերա

Անաբեպրիզ Նորին Մեծութեան Սոլիստ Ն. Ն. Ֆիգների։

Հինգշաբթի, Նոյեմբերի 13-ին,

Ֆինգների և Ջիրալդոնիի մասնակցութեամբ կներկայացուի

Ֆաուստ

ՎԱԼՊՈՒՐԳԵԱՆ ԳԻՇԵՐՈՎ

Օպերաս գործ., երաժ. Գունոյի։

Մասնակցում են՝ տ. տ. Արցիբաշևա, Կալինինա, Լիլինա, պ. պ. Ֆիգներ, Ջիրալդոնի, Փէդոթով Գաբրիլով։

Գլխ. ռեժ. Բոգոլիւբով։

Կատլիմայսեր Էսպոզիտո։

Սկիզբը ժամը 8-ին երեկոյեան։

Ազդ.—Վաղը. երեքշ., Նոյեմբերի 14-ին, կներկայացուի «Ռուսլան և Լիւդմիլա»։ Չաբաթ Նոյեմբերի 15-ին, 7-րդ «Գալա» ներկայացումը Ֆիգների և Ջիրալդոնիի մասնակցութեամբ. կը ներկայացուի 1. «Ցիւղական պատիւ» և II. «Գայացները»։ Կիրակի, Նոյեմբերի 16-ին՝ առաւօտեան բաւական իջեցրած գներով Ջիրալդոնի մասնակցութեամբ կներկայացուի 1. «Մեկնեան սափրիչ և II. «Привалъ кавалеріи» Տոմսակները ծախվում են։

(252) 1—1

Լոյս տեսաւ

Ն Վարդապետ Մելիք-Թանգեանի Հայոց եկեղեցական իրաւունքը» Ե. Դրքք. 807 երես. 1ր. 50 կ. դիմել Թիֆլիս «Գուտտենբերգ» և «կետրոնա ան». և հեղինակին՝ Герюсы Тат евъ.

(321) 3—3

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔՈՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

սրանով յայտարարում է, որ իւր առանում սոյն Նոյեմբերի 15-ին, օրուայ ժամը մէկին, նշանակուած է աճուրդ կատարով տալու չորս խանութ, որոնք գտնուում են Բաղարնայա փողոցի ծայրին, Աղեքսադրեան այգին մտնող քառանկիւնու մէջ։ Աճուրդին մասնակցել ցանկացողները կարող են պայմաններին տեղեկանալ քաղ. վարչութեան 4-րդ բաժանմունքում ամեն լի օր առաւօտեան ժամը 9-ից մինչև 3-ը։ Փակ ծրարներն ընդունւում են մինչև աճուրդի սկսելը։ Աճուրդի մասնակցելիս աճուրդավոսը պարտաւոր է ներկայացնել 70 ր. գրաւական։

(322) 2—2

Հրաւիրուում են

ԼԱՒ ՀԱՑՆ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԻՆՔ

հէյերէն, վրացերէն և պարսկերէն երգերի համար՝ գրամոֆոնի վրայ դուրս բերելու իրենց երգածները, որոնց համար կտրուի որոշ վարձատրութիւն։ Ցանկացողները թող վազօրօք յայտնեն իրենց ցանկութիւնը այս հասցէով. Магазин Общества Грамафоновъ въ Россіи Тифлисъ, Галавинс. д. Аміанца

(223) 3—1

Սոյն դեղը վաճառել թոյլ է տրուած Վարշաւի բժշկական վարչութեան կողմից առաջին ընդհանուր հիմունքներով։

ԵՍ ԱՆՆԱ ՀԻԼԼԱՑ

աճեցրել եմ իմ անունը երկայն (185 սանտիմետր երկայնութեամբ) մազերը, որոնք յիշեցնում են Լորելէյի մազերը,—շնորհիւ իմ հնարած առանձին օծանելիքի 14 ամսուայ գործածութեան։ Այս օծանելիքը ճանաչուած է իբրև մազերը թափուելու դէմ մի լաւ միջոց, որը միևնոյն ժամանակ նպաստում է մազերի աճմանը և նրանց արմատների պնդանալուն այս օծանելիքի շնորհիւ տղամարդու մօրուքը խիստ առողջ կերպով աճում է, նմանապէս (մինչև անգամ կարճատև գործածութիւնից յետոյ) գլխի և մօրուքի մազերը բնական փայլ են ստանում. ընդումին օծանելիքը մազերը պահպանում է վաղաժամ մազերը ոսպիտակելուց ծեր հասակում։

ՄԻ ԲԱՆԿԱՑԻ ԴԻՆԸ

3, 5 և 8. րուբլի

Հասանելիք փողն ուղարկած ժամանակ ուղարկում է պատուի ամեն օր աշխարհիս սմեն կողմերը ուղղակի գործակատար. ուղղուն բոլոր պահանջները։

ANNA CSILLAC
Wien I graben 14

82) 56—29

Открыта подписка на празднующую въ 1094 г. свой десятилѣтній юбилей
Всеобщбю маленькую газету

2р. за годъ **С-ПЕТЕРБУРГЪ** За 3 мѣс. **50к.**

Газета безцензурная.—Изданія годъ одинадцатый
Содержаніе газеты: придворныя, правительственныя, политическій и общественныя новости и руководящія къ нимъ статьи; хроника происшествій и уголовныхъ дѣлъ, новости научныя, историческія. медицинскія. о воспитаніи, о загадочныхъ явленіяхъ и пр.; романы, стихи, замѣтки о спортѣ. театрахъ. новыхъ книгахъ пр.

Въ теченіе 1904 г. будутъ помѣщены: романъ изъ современ. русской жизни «Три товарища» соч. А. Молчанова и переводъ лучшаго изъ новѣйшихъ германскихъ романовъ подъ заглавіемъ „Насущный хлѣбъ“.

Въ теченіе года болѣе сотни портретовъ современныхъ дѣятелей и рисунковъ текущихъ событій.

Подписная цѣна съ дост. и пересылкой за годъ **2 р.** за пол. года. **1 р.** за 3 мѣс. **50 к.**

Марками на 20 к. дороже. Газета выходитъ три раза въ недѣлю.

Адресъ Типографіи, Редакціи и Конторы: С.-Петербургъ, Невскій, 139.

Редакторъ-Издатель А. Молчановъ. 3—2

ԲՐՈԿԱՐԵԱՑ ԸՆԿ.

Ընդհանուր է իւր յատկութեամբ

ԳԼԻՅԵՐԻՆԻ ՍԱՊՈՆ

Պահպանում է կաշուի փափկութիւնը և աւելացնում նրա սպիտակութիւնը։

Կտորը 20 կոպ.

(M.) 148,224 10—4

Открыта подписка на 1904 годъ
на ежедневную политическую литературную и экономическую газету

„НОВОСТИ“

съ 100 приложеніями.

подписная цѣна:

1-го (большого) изданія для городскихъ подписчиковъ:	II-го (малаго) изданія для городскихъ подписчиковъ
на годъ 11 м. 10 м. 9 м. 8 м. 7 м.	5 рублей на 12 мѣсяцевъ, 2 р. 50 к. на 6 мѣс 1 р. 25 к. на 3 мѣс. и 50 коп. на 1 мѣс.
р. к. р. к. р. к. р. к. р. к. р. к.	
16 — 15 — 13 50 12 — 11 — 10 —	
6 м. 5 м. 4 м. 3 м. 2 м. 1 м.	
р. к. р. к. р. к. р. к. р. к. р. к.	
9 — 7 50 5 80 4 50 3 30 1 80	
для иногородныхъ подписчиковъ:	для иногородныхъ подписчиковъ:
на годъ 11 м. 10 м. 9 м. 8 м. 7 м.	6 рублей на 12 мѣсяцевъ, 3 р. на 6 мѣс., 1 р. 50 к. на 3 мѣс. и 55 к. на 1 мѣс.
р. к. р. к. р. к. р. к. р. к. р. к.	
17—15 50 14 50 13 50 12 50 11 50	
6 м. 5 м. 4 м. 3 м. 2 м. 1 м.	
р. к. р. к. р. к. р. к. р. к. р. к.	
10 — 8 50 7 — 5 50 4 — 2 —	

пониженіе подписной цѣны второго изданія газеты „Новости“
(для городскихъ подписчиковъ 5 р. вмѣсто 10 р. для иногородныхъ 6 р. вмѣсто 11 р.)
вызвало въ 1904 году Громадное распространеніе ея

100 БЕЗПЛАТНЫХЪ ПРИЛОЖЕНІЙ 100

а именно:

52 №№	**Петербургская жизнь** Еженедѣльный иллюстрированный художественный литературный журналъ Отдѣльная подписная цѣна журнала: безъ доставки и пересылки: на 1 годъ—5 р., на 6 м.—3 р., на 3 м.—1 р., 75 к. Съ доставкою и пересылкою: на 1 годъ—6 р., на 6 м.—3 р., на 2 м.—1 р.	52 №№
12 №№	ЭСКУЛАПЪ Медико-Гигіеническое Обозрѣніе	12 №№
12 №№	**Техническое Обозрѣніе.** (Новѣйшія открытія и изобрѣтенія, успѣхи промышленности и торговли въ связи съ успѣхами наукъ, просвѣщенія и техника),	12 №№
12 №№	**„Природа и Хозяйство“** (Естественныя науки. сельское хозяйство, садоводство и. т. п.).	12 №№
12 №№	**Новѣйшія Моды и Спортъ**	12 №№

ОКОЛО 2,000 ИЛЛЮСТРАЦІЙ

Обширный матеріалъ по Гигіенѣ и медицинѣ, домоводству, сельскому хозяйству, техникѣ и, вообще, для цѣлей самообразованія.

Контора газеты «НОВОСТИ», СПБ., Невскій пр., 18 Телефонъ 737.

При ковторѣ газеты «Новости» существуетъ
Книжный Магазинъ
услугами котораго подписчики „Новостей“ пользуются на льготныхъ условіяхъ.

4—2 (♣.)

Дозв. Цензурою 12-го Ноября 1903г. Վերէիչն և Գամիրմախեան Типографія Вереичевъ и Каменмахеръ Михайл. пр. Телеф. №852